

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արա Սահակյան Արթուրի ԱԶ-ն ԲԷՑ-ԷԱՃԱՊԶԲ-25/27 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
3	Կիսաճտկավոր կոշիկ (կաշվե): Բաղկացած կոշկերեսի քթամասից, հետևամասից, արտաքին գոտուց, ճտքերից, լեզվակից, փափուկ եզրակից, հիմնական ներդիրից և մաշվածադիմացկուն ներբանից /տակացուից/: Ներդիրը պետք է լինի կաշի, իսկ տակացուն ռետինե անջրանցիկ: Կիսաճտքավոր կոշիկի երեսացուն պետք է լինի սև գույնի բարձր որակի բնական կաշվից և մշակված լինի անջրանցիկ ծածկույթով: Բոլոր դետալները իրար միացված լինեն սոսնձով և կարված լինեն մաշվածադիմացկուն թելով, որի կարը պետք է թույլ չտա ջրի և խոնավության ներթափանցումը կոշիկի ներսամասի դետալներ: Կոշիկը պետք է ապահովի օդափոխանակությունը, այսինքն՝ օդագոլորշաանցիկությունը և ջերմահաղորդականությունը, որը կապահովի քրտնակլանումը: Ներբանը պետք է լինի մաշվածադիմացկուն նյութից, որի ջերմա և ցրտադիմացկունությունը պետք է ապահովի -40°C - $+50^{\circ}\text{C}$: Տակամասի ստորին հատվածի միջնամասում պետք է դաջված լինի կոշիկի չափսը (թվերով): Ներբանին ամրացվող հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված նվազագույնը 2մմ հաստության բնական հումքից՝ և կոշիկի համար նախատեսված 2.0-2.4 մմ հաստության սովորաբարից: Ճտքի քուղերի անցքերը մշակված լինեն 7-9 գույգ կոճականցքերով կախված կոշիկի չափսերից: Քուղերը պետք է պատրաստված լինեն ամուր և անջրաթափանց սինթետիկ քիմիական մանրաթելից, որի որակը կապահովի կոշիկի սահուն և արագ քուղավորումը, յուրաքանչյուրի վերջույթները (նակոնեչնիկները) թերմոմշակված՝ երկարությունը 1.2-1.6 սմ: Քուղերի երկարությունը առնվազն 150 սմ: Միջատակ՝ մետաղական, որն ապահովում է ոտնաթաթը ամբողջ երկարությամբ պաշտպանվածություն սուր ծակող իրերից: Միջատակը ներդրված բարձր հարմարավետությամբ՝ MESH: Մատակարար կազմակերպությունը

պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ քան 10 /տաս/ աշխատանքային օրում պատվիրատուին պետք է ներկայացնի մատակարարվող տեսականու նմուշ, որոնք պետք է համապատասխանեն նշված պահանջներին:

Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Մասնակիցը պետք է ներկայացնի կիսաճտքավոր կոշիկների նմուշի մեկական օրինակ և նմուշը պետք է պարտադիր համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Կիսաճտքավոր կոշիկների քանակները և չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ИП Ара Саакян Артурович в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом FES-ECΔCΠ2P-25/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
3	-